

ԱՐԹՒՐ ՇԷՆԵԱՆ
arthurshenian@gmail.com

[illegible]

Արխիւը մշակուած է ՀՀ Ազ-

345

- ա. ուղարկած նամակներ
- բ. ստացած նամակներ
- 3. Կենսագրական նիւթեր
 - ա. նիւթեր իր մասին (գրախօսականներ, յօդուածներ)
- 4. Հաւաքած նիւթեր
 - ա. Հայկական Հարցին մասին
 - բ. Միլանի գաղթօճախին մասին
 - գ. Ռուբէն Սեւակի մասին
 - դ. Գրիգոր Զօհրապի մասին
 - ե. հաւաքած նամակագրութիւններ
 - զ. խառն նիւթեր
 - է. Նայիրի ամսագիրեր
- 5. Լուսանկարներ:

Արդ, ուղարկուած նամակներն ու ստացուած նամակները քանակական միակշիռ պատկեր չեն պարզեր: Ստացուած նամակները իրենց քանակով մեծապէս կը գերազանցեն ուղարկուած նամակները: Այս երեւոյթին հիմնական պատճառը այն է, որ Ծառուկեան սովորութիւն չունէր պահելու իր հասցեագրած նամակներուն պատճէնները, այն համոզումով, որ «եթէ կարելի է, հասցեատէրը կը պահէ», ինչպէս կը վկայէ դուստրը՝ Նայիրին: Ուստի սա ենթադրել կու տայ մեզի, որ Ծառուկեանէն բազմաթիւ նամակներ կը շարունակեն մնալ անհատական արխիւներու, գրողական ֆոնտերու կամ տարբեր հաւաքածոներու մէջ:

Խնդրոյ առարկայ նամակները ընդգրկուած են կաթողիկոսութեան արխիւատան 55րդ հաւաքածոյի առաջին ցուցակին 27րդ թղթածրարին մէջ: Գրուած են՝

ա) Նայիրի ամսագիրի նամակաթուղթին վրայ (Ա., Բ., Գ., Ե., Զ. Է. ԺԱ., ԺԲ., ԺԳ. նամակներ),

բ) Սուրիոյ եւ Լիբանանի Գրողներու միութեան նամակաթուղթին վրայ (Ժ. նամակ),

գ) Նայիրի շաբաթաթերթի նամակաթուղթին վրայ (ԺԴ. նամակ),

դ) A4 ձեւաչափի սովորական թուղթի վրայ (Դ., Ը., Թ. նամակներ):

Ձեռագիրերը մեզի տրամադրելուն եւ մեր հարցումներուն պատասխանելուն համար շնորհակալութիւն կը յայտնենք արխիւատան տեսուչ հոգշ. Տ. Վիգէն վրդ. Տալլըճեանին, ինչպէս նաեւ բանասէր Գոհար Արթենեանին՝ ձեռագիրերու վերծանման աշխատանքին մասնակցելուն համար:

Լեզուական կամ կէտադրական որեւէ միջամտութիւն չենք կատարած՝ բնագիրին հաւատարիմ մնալու նպատակով, բացի քանի մը յաւելումներէ, որոնք ներառուած են անկիւնաւոր փակագիծերու մէջ:

Սիրելի Սարաֆեան,

Թէեւ առիթ չէ եղած որ խօսքով կամ գրով յարաբերինք իրարու հետ, բայց կը կարծեմ թէ մեծ ձեակերպութիւններ անհրաժեշտ չեն երկու գրողներու միջեւ, հաստատելու համար մտաւորական կապ մը: Չեմ գիտեր, առիթ ունեցա՞ծ էք հետեւելու այս կողմերու գրական շարժումներուն, եւ թէ անոնս բան մը կ'ըսէ՞ ձեզի: Որովհետեւ, ցարդ Ֆրանսայի հետ բաղձալի կապը չենք կրցած հաստատել: Հալէպի մէջ կը հրատարակուի Արեւելք¹ օրաթերթը, կուսակցական ուղղութեամբ: Խմբագրապետը² եւ եմ թէեւ, բայց անուանական դեր մը միայն կը կատարեմ, որովհետեւ լրագրութիւնը սըրտիս չի խօսիր: Արեւելքը³ ինծի համար, պարտականութիւն մըն է անելի, քան թէ սիրուած աշխատանք մը: Սակայն ունիմ Նայիրի⁴, գրական ամսագիր մը, որուն որոշած եմ ասկէ ետք տալ ամբողջ ճիգս: Վերջին թիւը դրկեցի ձեզի, «Յառաջ»⁵ հասցէով: Արտատպած եմ ձեր մէկ գրութիւնը՝ «Մշուշը»⁶: Արդ, պիտի խնդրեմ ձեզմէ, որ բարի ըլլաք աշխատակցիլ Նայիրիին, մասնատրաբար իմացական եւ դատողական բնոյթ կրող էջերով: Ստեղծագործական լայն էջերու համար, հանդէսին ծաւալը թոյլատու չէ: Անցողակի ըսեմ, թէ հակառակ կուսակցական ըլլալուս⁶ – Դաշնակցական – Նայիրին յաջողած եմ ընել ազատ խորհող եւ արտայայտող բեմ մը՝ որ գիտէ յարգել ուրիշներուն կարծիքը: Վերջերս բոլորովին անտեղի ու անարդար պայքար մը շղթայագերծուեցաւ այս կողմերու «յառաջդիմական» մամուլին կողմէ, Նայիրիի դէմ, Օշականի⁷ մէկ յօդուածին⁸ առիթով: Չեմ կարծեր թէ կրցաք հետեւիլ բոլոր գրուածքներուն, եւ լա՛ւ որ չկրցաք: Որովհետեւ, Մեսրոպի լե-

¹ Արեւելք. - Հայ յեղափոխական դաշնակցութեան Սուրիոյ պաշտօնաթերթ, լոյս տեսած է Հալէպ, 1946էն 1963:

² Թէեւ պաշտօնաթերթին մէջ ընդհանրապէս չեն նշուիր խմբագիրներու անուններ, բայց ստոյգ է, որ Ծառուկեան երկար չէ մնացած իր պաշտօնին վրայ:

³ Նայիրի. - ազգային-գրական շաբաթաթերթ, հիմնադիր-խմբագիր՝ Անդրանիկ Ծառուկեան: Լոյս տեսած է 1941-42 (Հալէպ, պարբերաթերթ), 1945-49 (Հալէպ, ամսաթերթ), 1951-83 (Պէյրուս, 1951ին՝ ամսաթերթ, 1952էն՝ շաբաթաթերթ, ունեցած է ընդհատում մը՝ 1975-77):

⁴ Յառաջ. - ընկերային, քաղաքական ու գրական օրաթերթ (սկիզբը՝ ՀՅԴ պաշտօնաթերթ, յետագային՝ անկախ), լոյս տեսած է Փարիզ 1925-2009 (ընդհատուած է 1940էն 1945): Խմբագիրներ՝ Շաարշ Միսաքեան (հիմնադիր), Արփիկ Միսաքեան:

⁵ Ն. Սարաֆեան, «Մշուշը», Նայիրի, Յունիս-Սեպտեմբեր, Ժ-ԺԲ:1946, էջ 586-89:

⁶ Ծառուկեան կանուխէն մտած է ՀՅԴ շարքերը եւ անկէ հեռացած 1956ին:

⁷ Յակոբ Օշական (1883-1948). - արեւմտահայ գրող, գրաքննադատ:

⁸ Յ. Օշական, «Հայրենի բերքը (քառասնամեայ վաստակին ուժով)», Նայիրի, Փետրուար, Զ:1946, էջ 278-81: Պայքարին տուն տուողը՝ այս յօդուածին մէջ հայաստանեան գրականութեան մասին Օշականի գնահատականներն էին:

զուն, ամբողջ երկու ամիս, վերածուեցաւ անճանաչելի եւ տգեղ բանի մը, անելի եւս տգեղ ոգիի մը որպէս արտայայտութիւն: Յամենայնդէպս, այդ բոլորը ուրիշ պատմութիւն է արդէն: Հարցեր կան, որոնց լուծումը անելի ժամանակէն կախում ունի, քան թէ մեր իմաստութենէն:

Միշտ համակրած եմ ձեր լուրջ դատումներուն եւ տոկուն գրականութեան: Եղբայրօրէն կը խնդրեմ, որ կապուիք Նայիրիին եւ փութացնէք ձեռագիրներ, ձեր յարմար դատած նիւթին շուրջ: Չմոռնաք նաեւ լուսանկար մը եւ «Իշխանուիի[ն]»էն⁹ ետք ձեր լոյս ընծայած գործերէն մէկական օրինակ: Եթէ հետաքրքիր էք այս կողմերու շարժումի [մէկ անընթ. բառ], կրնամ գիրքեր դրկել, ըստ ձեր նախասիրութեան: Սիրով՝ Ա. Ծառուկեան

Բ.

Հալէպ, 18 Ապրիլ 1947

Սիրելի՛ Սարաֆեան,

Առի նամակդ եւ ձեռագիրը – «Չունինք ընտրութեան իրաւունք»¹⁰: Այս վերջինը տպուեցաւ արդէն Նայիրիի ներկայ (Ապրիլ) թիւով, նոյնութեամբ, պատուոյ տեղը: Թերթը եւ ուրիշ կապոց մը գրքեր, կը ստանաք հաւանօրէն քիչ մը ուշ, որովհետեւ յանձնեցի սովորական թղթատարին: Մինչ այդ, կը խնդրեմ որ նկատի ունենաք հետեւեալ կէտերը:

I. Կ'ընդունիմ վճարումի դրութիւնը: Բարի եղէք միայն յայտնել ձեր պահանջը, եւ կրնամ իսկոյն գումարը փոխանցել տեղդ գտնուող առետրականի մը խողովակով: Աւելորդ է յիշեցնել, թէ իր հարստութեամբը չէ որ կը փայլի Նայիրին: Փոխարէն՝ ունի անսահման պատրաստակամութիւն, նիւթապէս օժանդակելու արժանատւոր եղբայրակիցի մը: Այնպէս որ, սիրելի Սարաֆեան, ձեր աշխատակցութիւնը, կրնաք վստահ ըլլալ թէ կը վարձատրուի կարելի փութկոտութեամբ: Մինչ այդ, օդային թղթատարով փութացուցէք քանի մը յօդուած եւ նշանակեցէք ձեր պահանջին: Այդ առաջին գումարը, ինչ ալ ըլլայ՝ կը ստանաք ըստ ձեր պահանջին: Կը խնդրեմ միայն, որ յապաղումի չ'ենթարկուին ձեր առաքումները: Նոյն ձեւով նաեւ գրքերու համար:

II. Ձեր մէկ լուսանկարը: Բալուեանէն¹¹ անելնալիքը շատ սրտիս չի խօսիր: Մանաւանդ որ նախապաշարուած եմ այդ մարդուն դէմ եւ ինծի այնպէս կու գայ թէ գրական իր գործունէութիւնը զերծ չէ անձնական հաշիւներէ եւ նկատումներէ: Այսուհանդերձ, այդ մէկը... ուրիշ պատմութիւն է: Իմ ուզածըս այն է, որ անտիպ լուսանկար մը ունենամ ձեզմէ եւ տպագրեմ Նայիրիի մէջ: Այսքան:

⁹ Ն. Սարաֆեան, *Իշխանուիին*, Փարիզ, 1934, 108 էջ:

¹⁰ Ն. Սարաֆեան, «Չունինք ընտրութեան իրաւունք», *Նայիրի*, Ապրիլ, 3:1947, էջ 154–57:

¹¹ Հրանդ Բալուեան (1904–67).- արեւմտահայ գրող, *Ձուարթնոց* գրական ամսագիրի գլխաւոր խմբագիր:

III. Այստեղ լրջօրէն կը մտածենք «Գաղութահայ գրողներու համագումար»¹² մը կազմելու մասին: Ի՞նչ է ձեր կարծիքը եւ ա) ո՞ր պէտք է գումարել, բ) որո՞նք պէտք է կանչել, եւն.: Այս մասին կ'ուզէինք անպայման ունենալ նաեւ ձեր կարծիքը, յայտնելով նաեւ, որ չենք ուզեր 20 հոգիէն անելի ունենալ, որպէսզի Բաբելոնի չվերածուի, եւ, մանաւանդ, արժանաւորութիւնը չըկորսնցնէ:

Ապաստելով ձեր արագ պատասխանին եւ առաքումներուն՝

Սիրով՝

Ա. Ծառուկեան

Գ.

Հալէպ, 17 Մայիս 1947

Սիրելի՛ Սարաֆեան,

Նամակ, ձեռագիր եւ նկար ստացայ առջի օր: Մայիսի թիւը լոյս տեսած էր արդէն: Կը տպուին Յունիսի թիւով¹³: Չեմ գիտեր թէ որ սմետղով խլուրդն [է] որ «զգուշացուցեր» է քեզ թէ կրնայ խոստացուած վճարումը չկատարուիլ, բայց կը մտածեմ թէ ձեր միջավայրը բաւական լորճուած ըլլալու է եւ մտաւորականութիւն կոչուած խմբակը բաւական այլասերած՝ որպէսզի անոնցմէ մէկն ու միւսը կարենայ մտածել թէ հայ գրող մը կրնայ ուրիշ հայ գրողի մը իրաւունքը իրացնել: Կը ցաւիմ, եւ, ի սրտէ: Այս մասին այսքան: Ներփակ կը ստանաս 1500 ֆր.: Փոխան 1200ի: Նկարին ետեւն է: Ջուրի մէջ դիր ու պիտի պատահի... հրաշքը, առանց վնասելու նկարին: Այս միջոցը կարելի եղաւ այս անգամ: Յաջորդ անգամ, կը յուսամ անելի «պարկեշտ» ձեւով փոխադրել: Աշխատակցութիւնը՝ ըրէ այնպէս ինչպէս կ'ուզես: Յայտնեմ միայն, թէ անկախ աշխատակցութենէդ, ամէն ամիս 1000 ֆր. պիտի դրկեմ հասցէիդ, պարզ իբրեւ եղբայրական օգնութիւն: Խոստովանիմ, թէ բոլորովին մաքուր ակէ չի գար այս որոշումս եւ որոշ դեր մը ունի[ն] նաեւ անձանօթ խլուրդները... նախանձիլ տալու չարախիւնդ գոհունակութեամբ: (անստորագիր)

¹² Գաղութահայ գրողներու համագումարը կայացած է 18–20 Սեպտեմբեր 1948ին, Լիբանանի Պեքաայի շրջանի Շթորա գիւղին մէջ: Նպատակն էր ստեղծել «Գրողներու ընդհանուր միութիւն մը, որ իրարու կապէ Սփիւրքի գրագէտները, գաղութ գաղութ», ինչպէս նաեւ «ամուր հիմներու վրայ դրուած հրապարակչական մը, լուսատու կեդրոնի մը մէջ» (Նայիրի, Յուլիս 1947, թիւ 2., էջ 376), ինչը չ'իրականանար: Այս մասին յանդիմանալ տեղեկութիւններու համար տե՛ս՝ Սեւան Տէյիրմենճեան, «Անդրանիկ Ծառուկեանի զեկոյցը՝ սովետահայ գրականութեան մասին», Հայկազեան հայագիտական հանդէս, ԻԳ:2003, էջ 499–515. նաեւ նոյնի՝ «Գաղութահայ գրողներու համագումարը եւ Ծառուկեան», Գարուն, 10:2002, էջ 78–85:

¹³ Նշեալ ձեռագիրը Սարաֆեանի «Ողբը» գրութիւնն է, Նայիրի, Յունիս, 5:1947, էջ 246–50:

Սիրելի՛ Սարաֆեան,

Երէկ ստացայ նամակդ: Կը պատասխանեմ իսկոյն: Ետ ուզած ձեռագիրըդ, դժբախտաբար արդէն սկսած էր շարուիլ: Ոչինչ: Ծերերէն քաշուելու պատճառ չունիս, որովհետև արդէն անոնք... չեն կարդար մեր գրածները: Ծեր են ոչ միայն տարիքով, այլեւ հոգիով: Չեն կարդար: Ուրեմն, անցնինք:

ա) Ներփակ՝ 1000 ֆր.: Ասիկա իմ առաջին փորձս է՝ առանց ապահովագրելու: Ուրիշներ կ'ընեն եղեր եւ անվնաս տեղ կը հասնի եղեր: Որով, շատ կը խնդրեմ, ստացածիդ պէս երկտող մը փութացուր օդային փոստով եւ նոյն օրն իսկ ճամբայ կը հանեմ երկրորդը: Ձեր այս գեղարուեստական դրամանիշներէն 3 հատ գնած եմ արդէն եւ անհամբեր եմ օր առաջ հասցընելու քեզի: Նկարի ետեւ դնելը երկար բարակ աշխատանք է: Եթէ այս ձեւը յաջողի, կրնամ արագ-արագ առաքել: Դիւրագագացութեան խնդիր հանել անելորդ է: Ու յետոյ, ո՞վ ըսաւ թէ «ամսական կապել» մըն է ասիկա: Պարզապէս ձեռագիրերդ է, որ կը վճարուին, եւ, իբրեւ խմբագիր, կարծեմ իրաւունքիս մէջն եմ ես ճշդելու անոնց համար ըլլալիք վճարումին քանակը: Այս մասին այսքան եւ այս մասին թող ասիկա վերջին յիշատակութիւնը ըլլայ մեր միջեւ:

բ) «Վէնսէնի անտառը»¹⁴ դրկէ ինծի, առանց ուրիշին բաժին հանելու ասկէ իբրեւ հատուած կամ նախաճաշակ: Քանի որ գրքի մը 30 էջն է կ'ըսես, կրնամ 2 թիով տալ Նայիրիի մէջ: Մանաւանդ որ սիրելի պիտի ըլլայ ինծի համար ու այլապէս արժէքատուր՝ քու ներաշխարհդ տալուն: Կրնամ նաեւ հաճելի անակնկալ մը ընել քեզի, քանի մը հարիւր օրինակ առանձին գրքերով տպելու միայն ու միայն քեզի համար, քանի որ Նայիրին անծանօթ է Ֆրանսայի մէջ (3-4 օրինակ միայն կը դրկենք, այն ալ բարեկամներու): Որով՝ թէ բաղձանքդ իրագործուած կ'ըլլայ (առանձին գրքով իրատարակել) եւ թէ օգտուած կ'ըլլայ Նայիրին: Այս կողմի հայերը կը կարդան Նայիրիի մէջ, ձերինները կը կարդան իբրեւ գիրք եւ դուն նիւթապէս կ'օգտուիս առանց որեւէ ծախս ըրած ըլլալու եւ, մանաւանդ, առանց արժանապատուութեանդ վնաս մը հասած տեսնելու: Գիրքերուդ տպագրութեան իբրեւ ծախս, կամ հաշտին – Նայիրիի մէջ տպուած ըլլալէն քեզի գալիք հեղինակի իրաւունքը: Այս մասին ալ այսքան: Որով՝ կը սպասեմ անհամբեր:

¹⁴ Ն. Սարաֆեան, *Վէնսէնի անտառը*, խմբ.՝ Գրիգոր Պըլլտեան, L'imprimerie de la Manutention a Mayenne, Փարիզ, 1988, 280 էջ: Առաջին անգամ տպուած է *Նայիրիի* 1947 Սեպտ.-Նոյեմբեր (Գ. տարի, թիւ 8-9-10) եւ Դեկտ.-Յունուար (Գ. տարի, թիւ 11-12) թիւերուն մէջ, յաջորդաբար էջ 443-71 եւ 557-69: Պըլլտեանի խմբագրութեամբ լոյս տեսած հատորին մէջ կից կը գտնենք նաեւ այլ գրութիւններ:

գ) Թէ Մինասը¹⁵ ինչ գրած է քեզի՝ չեմ գիտեր: Իմ պահարանս բաց վիճակով իրեն յանձնած էի, որ փօստին տայ եւ ապահովագրէ: Նկարին ետեւ դնելու գիտը իր ճարտարութիւնն է: Հետեւաբար՝ որեւէ պատասխանատուութիւն չեմ վերցնէր: Մինասը եռանդուն եւ աշխատող տղայ է, բայց ունի թերութիւն մը: Դրամը շատ կը սիրէ: Նոյնիսկ աւելի, քան գրականութիւնը: Տարեցոյցն ալ դրամի համար է: Երանելի մը գտած է, որ կը վճարէ իրեն խմբագրութեան համար: Եթէ դրամ ստանաս՝ բան մը դրկէ: Այս ալ այսպէս:

դ) Գրական համագումարը՝ պիտի կայանայ անպայման: Կրնաք վստահ ըլլալ, թէ անհրաժեշտ լրջութիւնը կը դնենք գործին մէջ: Շուտով՝ աւելի մանրամասն կը գրեմ այս մասին: Մինչ այդ՝ բարի եղիր յայտնել Միսաքեանին¹⁶ թէ խոստացած նամակը դեռ չեմ ստացած: Այդ յաւիտենական երիտասարդին չի վայելէր այսքան դանդաղ ըլլալ: Կը սպասեմ, որ գրէ: Անհրաժեշտ է, որ իրեն հետ աշխատիք համոզել Զօպանեանն¹⁷ ալ որ դրական կեցուածք ունենայ համագումարին հանդէպ: Դեռ չստացանք իր պատասխանը: Զօպանեանը աղուոր խորհրդանիշ մըն է ու մեղք պիտի ըլլայ՝ եթէ որեւէ նկատումով դուրս մնայ: Ամերիկայէն՝ Զարեան¹⁸, Համաստեղ¹⁹ եւ Արամ Հայկազ²⁰ պատասխանեցին դրապէս: Մնաց միայն Բ. Նուրիկեանը²¹: Եգիպտոսէն՝ պատասխանած են առանց բացառութեան: Հոս նոյնպէս: Հոտկէ՝ դուն, Միսաքեանը եւ Նարդունին²²: Դեռ կը մնան Զօպանեան, Պէշիկթաշլեան²³ եւ Թօփալեան²⁴: Պէտք է յիշեցնել եւ մղել՝ որ գրեն եւ համամտութիւն յայտնեն: Ի վերջոյ համագումարը կշիռ մը պիտի ունենայ եւ լուրջ առաջադրութիւններով գործի անցնի: Մեղքը իրենց վզին՝ եթէ մեծակշիռ գործերու մէջ մանրավաճառի հաշիւ դնեն:

ե) Հրանդ Բալուեանը ինձմէ նեղուած է անարդար կերպով: Մէկէ աւելի անձերու նամակներ գրած է՝ իմ մասիս քնքոյշ արտայայտութիւններով:

¹⁵ Մինաս Թէօլթլեան (1913–97).- սփիւքահայ գրականագէտ, ուսուցիչ, խմբագիր, հրապարակագիր:

¹⁶ Շաւարշ Միսաքեան (1884–1957).- Փարիզի *Յառաջ* օրաթերթի խմբագիր, հրապարակագիր, դաշնակցական գործիչ:

¹⁷ Արշակ Զօպանեան (1872–1954).- արեւմտահայ գրագէտ, գրաքննադատ, բանասէր, *Ծաղիկ* եւ *Անահիպ* հանդէսներու խմբագիր:

¹⁸ Կոստան Զարեան (1885–1969).- բուն անունով՝ Կոստանդին Եղիազարեան, բանաստեղծ, արձակագիր, գրականագէտ:

¹⁹ Համաստեղ (1895–1966).- բուն անունով՝ Համբարձում Կելենեան, սփիւքահայ արձակագիր:

²⁰ Արամ Հայկազ (1900–86).- բուն անունով՝ Արամ Չեքեմեան, ամերիկահայ արձակագիր:

²¹ Բենիամին Նուրիկեան (1894–1988).- ամերիկահայ արձակագիր:

²² Շաւարշ Նարդունի (1898–1968).- բուն անունով՝ Ասքանազ Այվազեան, ֆրանսահայ արձակագիր, հրապարակագիր:

²³ Նշան Պէշիկթաշլեան (1898–1972).- ֆրանսահայ երգիծագիր:

²⁴ Բիւզանդ Թօփալեան (1902–70).- ֆրանսահայ բանաստեղծ, խմբագիր, նկարիչ:

Խնդիրը հետեւեալն է. Բալուեանը (գրած եմ ես) շատ լաւ խմբագիր մըն է, բայց շատ գէշ քննադատ մը: Հրաշալի հրատարակութիւններ գիտէ ընել, բայց ողբալի հասկացողութիւն ունի գրականութեան մասին: Այս բաները գրել կարծեմ ոճի մը չէր, երբ ինք, դժբախտութիւնը ունեցած է գրելու, թէ Համաստեղ շատ վատ կը մնայ, քան.... Կաքաւեանը²⁵, թէ Չարենց²⁶ պարզապէս գրական agitateur²⁷ մըն է եւն., եւն.: Ու ամէնէն աններելին՝ վարկաբեկել փորձած է Շուշանեանը²⁸, անոր մահէն ետքն ալ եւ այդ մահը ծանուցանելու առիթով: Այս բոլորը համակրելի չէ որ դարձուցած են զինք: Ուրիշ որեւէ մէկու պիտի չուզէի գրել այս մասին, բայց կը գրեմ քեզի, վստահ՝ թէ կ'ըմբռնես: Ո՞ր կը մնայ մտաւորական պարկեշտութիւնը, ո՞ր կը մնայ պարզ պարկեշտութիւնը ինքը, եթէ մեր անհատական հաշիւները պիտի մտցնենք նաեւ գրականութեան մէջ եւ առաջ երթանք մահու նուիրագործըւած յիշատակներ իսկ սեւցնելու աստիճան: Աւելորդ է ըսել, թէ ո՛չ գրական, ոչ գաղափարական եւ ոչ ալ անձնական որեւէ խնդիր չեմ ունեցած եւ չունիմ իրեն հետ: Ո՛չ երկտող մը գրած եմ, եւ ո՛չ ալ ստացած իրմէ: Պարզապէս հայ գրողի վրդովման յայտնած եմ, ուրիշ գրողներու հանդէպ եղած անիրաւութեանց առիթով: Բայց Բալուեան շատ գէշ մտածել կու տայ իր մասին, երբ այստեղէն documentներ²⁹ կը հաւաքէ իմ մասին: Սիմոնեան³⁰ անունով մէկու մը գրեր է, որ գտնէ ու իրեն դրկէ 1935ին լոյս տեսած մէկ գիրքս՝ Մոխրամանը³¹: Հակադաշնակցական թերթեր յաճախ կը շահագործեն այդ գիրքը (անշուշտ խեղաթիւրելով): Բալուեան զոհն է այդ թերթերուն: Գիրքը ատենին մեծ աղմուկ հանեց եւ կսկցկն. խնդիր ստեղծեց: Ես Ճեմարանի³² աշակերտ էի եւ... վտարուեցայ: Վերջին տարին: Տնօրէնը Շանթն³³ էր: Արդար չէր իր վերաբերումը ինծի հանդէպ: Խորունկ ցնցում մը կրեցի եւ ի վերջոյ Մոխրամանին մէջ քանի մը պարսաւի էջեր դրի Շանթին դէմ: Եւ ո-

²⁵ Վահրամ Կաքաւեան (1903–73).- հայ ֆրանսագիր հեղինակ, ֆրանսական գրականութեան մէջ ծանօթ եղած է Վիքթոր Կարտոն անունով:

²⁶ Եղիշէ Չարենց (1897–1937).- բուն անունով՝ Եղիշէ Սողոմոնեան, բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, հրատարակիչ:

²⁷ Անկարգութիւն եւ խառնակութիւն հրահրող (ֆրանսերէն):

²⁸ Վազգէն Շուշանեան (1903–41).- աւագանի անունով՝ Օննիկ Շուշանեան, ֆրանսահայ արձակագիր, հասարակական գործիչ:

²⁹ Փաստաթուղթ (անգլերէն):

³⁰ Սիմոն Սիմոնեան (1914–86).- սփիւռքահայ գրագէտ, *Սփիւռք* շաբաթաթերթի հիմնադիր-խմբագիր, Պէյրութի «Սեան» տպագրատան ու հրատարակչատան հիմնադիր:

³¹ Ա. Ծառուկեան, *Մոխրաման*, տպ. Անահիտ, Պէյրութ, 1935, 82 էջ:

³² Հայ Ճեմարան, հիմնուած է 1930ին Պէյրութ, Լեւոն Շանթի եւ Նիկոլ Աղբալեանի կողմէ: 1950էն մինչեւ օրս կը գործէ Համազգայինի սկիզբը՝ Նշան Փալանճեան ապա՝ Մելանքոն եւ Հայկ Արսլանեան ճեմարան անունով:

³³ Լեւոն Շանթ (1869–1951).- բուն անունով՝ Լեւոն Սեդրոսեան, արեւմտահայ գրող, թատերագիր, մանկավարժ, պետական ու հասարակական գործիչ:

րովհետեւ գիրքը ատենին հաւաքուեցաւ եւ անգտանելի է այսօր, ուզողը ուզած բովանդակութիւնը կուտայ անոր: Դեռ վերջերս, Ռամկավար թերթ մը (Զարթօնք)³⁴ բաց նամակով մը ինծի կ'ուղղէր հետեւեալ տողերը. – Եթէ քաջ ես, արտօնութիւն տուր, որպէսզի արտատպենք «Մոխրամանը եւ թող յայտնի ըլլայ... Դաշնակցութեան դէմ գրածներդ»: Անմիջապէս տուի արտօնութիւնը, եւ մարդիկ հրաժարեցան տպելէ, անշուշտ երբ գիրքը ձեռք յաջողեցան անցնել եւ տեսնել, թէ գաղափարական գետնի վրայ որեւէ հակասութիւն պիտի չկրնան գտնել անցեալին ու ներկային միջեւ: Իսեղճ Բալուեանը ինքն ալ ինկած է միեւնոյն սխալին մէջ: Ափսո՛ւ, որ գիրքը չունիմ: Այլապէս՝ կրնայի օրինակ մը ես նուիրել իրեն: Վերջին հաշուով այնքան ալ գէշ գիրք մը չէր ու կարդալը յոգնութիւն պիտի չըլլար: Բայց կարեւորը գիրքը չէ, անշուշտ, այլ Բալուեանի... գրական հետաքրքրութիւնը: Թէ ինչու այսքան երկար գրեցի այս մասին, զարմանաս գուցէ: Իսկ ես չեմ զարմանար նամակիս այսքան երկարելուն: Տարիներէ ի վեր, չեմ յիշեր այսքան երկար գրած ըլլալ որեւէ մէկուն (ատենին ... աղջկան³⁵ մը գրելու յիմարութիւնը ունէի): Եթէ ցերեկ ըլլար ու ես ըլլայի գրասեղանիս առջեւ, հաւանօրէն լայն տողերով ու երկու էջով վերջանար ըսելիքս: Բայց հիմա գիշեր է, զարհուրելի տաք մը կ'ընէ ու ժամը 2ին դեռ քնանալու յոյսը չունիմ: Ահա թէ ինչու շատախօսելը ամէնէն բնական բանը [կը] թուի:

զ) Եթէ ատենը մէկ «Գրական նամականի»ի պէս բան մը դրկես Նայիրի-ին, կարծեմ գէշ չըլլար: Փարիզի գրողներու մասին մեծ հետաքրքրութիւն կայ այստեղ: Ձեզի համար շատ սովորական թուող բաները հոս կրնան հաճոյքով կարդացուիլ: Թէ ո՞վ ինչպէս կ'ապրի, ի՞նչ կ'ընէ, ի՞նչ կը հրատարակէ, են., են.: Առանց մասնաւոր խորացումի, տեղեկատուութեան ձեւով եւ ծածկանունով՝ կրնաս գրել կարծեմ: Ու յետոյ, շատ մեծ ծառայութիւն մը կ'ընես՝ եթէ նկարներ դրկես: Գրագէտ դէմքերու, նկարիչներու, քանդակագործներու են.: Նայիրիի արտաքին յարդարանքին ալ հոգ կը տանիմ եւ նկարները միշտ փայլ կուտան:

է) Վերջացնելէ առաջ կրկին յիշեցնեմ, որպէսզի իսկոյն պատասխանես: Դրամին հասնիլը կ'ուզեմ օր առաջ գիտնալ, որպէսզի միւս երկուքն ալ ղըրկեմ յաջորդաբար:

ը) Եթէ մոռցած բան մը ունենամ, յետ գրութեամբ կը շարունակեմ առտուն, նամակս փոստ դրկելէ առաջ:

Սիրով՝
Ա. Ծառուկեան

Ստացած եմ 1500 \$-ը. Ծառուկեանէն

³⁴ *Զարթօնք*. – ՌԱԿ Լիբանանի պաշտօնաթերթ, լոյս կը տեսնէ 1937էն:

³⁵ Հաւանաբար կ'ակնարկէ արծակագիր, խմբագիր եւ հրապարակախօս Սիրան Սեզային (1903–73), բուն անունով՝ Սիրան Զարիֆեան–Քիփէլեան, որուն հետ մըտերմիկ յարաբերութիւններ ունեցած էր ատենին:

1000
2500
2000
4500
2000
6500

Ե.

Հալէպ, 24 Յուլիս 1947

Սիրելի Սարաֆեան,

Բազմաթիւ մաշեցնող ու լարուած ճիգ պահանջող աշխատանքներ պատճառ եղան որ 8-10 օր ուշացնեմ նամակս: Այժմ, շատ ատելի... զբաղած եմ: Ու եթէ այս երկտողը կը գրեմ, պարզապէս պարունակեալը – 2000 ֆր. – հաստատելու համար է:

Երանի ձեզի....

Հաւանօրէն միեւնոյն մաղթանքը դուք կ'ընէք մեզի, ենթադրելով, թէ ուղտի կարաւաններով ընթացող այս Արեւելքին մէջ լայն ժամանակ ունինք, մինչդեռ դուք հեւիհեւ կեանքի մը մէջ կը... Երանի ձեզի...

«Վէնսէնի անտառը» կը սպասեմ անհամբեր: Միւսը՝ Պաթօսը³⁶ ցրուել տուի (3 էջ շարուած էր): Ձեռագրի կը սպասեմ:

Սիրով՝ ԱՆ

Զ.

Հալէպ, 4 Օգոստ. 1947

Սիրելի՛ Սարաֆեան,

Երէկ ստացայ «անտառը»³⁷: Նախորդ օրը... հեռագրած էի որ փութացնես: Ոչի՛նչ: Եթէ իզուր անցաւ հեռագիրս, գոնէ յաւելեալ փաստ մը եղաւ, թէ որքան անհամբերութեամբ կը սպասէի: Ու հիմա, որ կարդացած եմ ձեռագիրդ ամբողջութեամբ, կրնամ վկայել, տաք ու հարազատ զեղումով – Ապրի՛ս: (Այս բառը լաւ չփախաւ անշուշտ՝ պզտիկէն մեծի մը, բայց... խմբագիրները այդ ազատութիւնը կուտան իրենք իրենց): Նոր ներաշխարհ մըն է, արդիական շունչով, ոճով, արդիական մարդու մը ներաշխարհը: Մե՛ր ժամանակի մարդոց, մե՛ր ներաշխարհը: Հինը՝ ... չեմ սիրեր այն չափով, ինչ չափով որ կ'աստուածացնեն: Այս մէկը սակայն՝ արդի մարդուն հոգին է: Գլուխգործոց մը: Անսահմանօրէն ուրախ եմ, որ ինձի տրուեցաւ զայն առաջին անգամ կարդալու հաճոյքին հետ, նաեւ, առաջին անգամ տպելու պատիւը: Դժբախտաբար – ատելի ճիշդը բարեբախտաբար – այս թիւին (Օգոստ.) չի հասնիր: Պիտի չդնեմ նաեւ Սեպտեմբերին, բայց պիտի ծանու-

³⁶ Խօսքը Սարաֆեանի «Pathosի մը շուրջ» խորագրով գրութեան մասին է, *Նայիրի*, Օգոստոս, 7:1947, էջ 421–29:

³⁷ Նկատի ունի «Վէնսէնի անտառը»:

ցանձեմ եւ ծրագրած բացառիկ թիւս («Անտառ»ին համար) միացեալ ձեւով (Նոյեմբ.-Դեկտ.) պիտի բովանդակէ «Վէնսէնի անտառը», ամբողջութեամբ: Այդ թիւը պիտի ունենայ 130-40 էջ եւ 40 էջը՝ քեզի վերապահուած է: Իսկ այս երկու թիւերուն համար՝ շարուած ու կրկին ցրուած ձեռագիրդ կուտամ:

Անցեալ շաբաթ 2000 ֆր. ներփակեցի: Յուսամ ցարդ ստացած կ'ըլլաս: Խնդրեմ՝ իսկոյն պատասխանէ: Դրամին կորուստէն աւելի՝ սպասումդ եւ ձեռնունայն մնալու վիճակդ է որ անհանգիստ կ'ընէ զիս: Այսօր, ուրիշ 2000 ֆր. եւս փոխանցեցի հոս, բարեկամի մը, որ հոդ վճարել պիտի տայ քեզի: Այս մէկը եթէ օրին ստանաս (ըստ իրեն Օգոստ. 15ին), լաւագոյն ձեւը կ'ըլլայ, եւ յետայսու այդ ճամբով կը դրկեմ, թէեւ հարիւրին 20 աւելի կ'արժէ ֆրանքը:

Այսօր՝ այսքան: Գրէ ինծի, երբ տրամադիր ըլլաս: Մանաւանդ առողջական վիճակիդ մասին: Եթէ ըսեմ, թէ... կարօտցած եմ քեզ, երբեք մի զարմանար: Անշուշտ մէկը պէտք է կարենայ բացատրել չճանչցած ու չտեսած մարդիկ կարօտնալու այս վիճակը:

Սիրով՝ Ան.

Է.

Հալէպ, 20 Նոյմբ. 1947

Սիրելի՛ Սարաֆեան,

Երկու շաբաթէ իվեր հասած եմ տեղս եւ արդէն իսկ խառնուած տափակ այլ յոգնեցնող առօրեայիս: Ծամբորդութեանս ընթացքին, միշտ միտքս էիր եւ շատ յաճախ մտածեցի գրել քեզի: Բայց միշտ, գրելիքս շատ էր, եւ պայմանները հազիւ թոյլ կուտային բացիկ մը մրոտելու: Նախընտրեցի չգրել, քան թէ պայմանադրական ձեւակերպութեան մը վերածուած տեսնել այնքան ջերմ զգացումի մը արտայայտութիւնը: Նոյնիսկ հիմա, գողցուած ժամանակ մըն է առիթը այս երկտողին:

Ծամբորդութենէս գոհ եմ: Առաջին անգամն էր որ Եւրոպան կը տեսնէի ու բնականաբար աւելի շփոթ ու խառնակ տպաւորութիւններու կոյտ մը կայ մէջս, քան թէ որոշ ու յստակ պատկերներու շարք մը: Յամենայնդէպս, չեմ զղջար ըրած զոհողութեանս համար, նոյնիսկ, վերադարձէս ետք, տպարանիս Արշակաւանային վիճակը տեսնելէ ետք... Նայիրին սկսած ենք տպել եւ հիմա «Վէնսէն»ի փորձերուն վրան եմ: Նոր տառերով կը շարուի, եւ շատ գեղեցիկ բան մը դուրս պիտի գայ, մանաւանդ որ այս թիւին թուղթն ալ ընտիր է: Կ'աշխատիմ սրբագրութիւնները այնպէս ընել, որ սխալ չսպրդի: Բայց... գիտես թէ այս մանր ու հատիկ հատիկ տառերը որքան սահուն են եւ դաւադիր:

Հոռմ այցելեցի Զարեանի աղջկան³⁸: Ինք չկար: Կար... մայրը³⁹: Աղջիկը ամուսնոյն հետ գացած էր Նափօլի, Զարեանը նաւէն առնելու: Տես դիպուածին խաղերը: Յաջորդ օրը Զարեան Հոռմ պիտի հասնէր եւ նոյն օրը, առաւօտ կանուխ, ես ստիպուած էի ... օդանաւ նստիլ: Բայց իր տիկինը (նախկինը) խորապէս տպաւորեց զիս: Ազնուականութեան բացառիկ տիպար մըն է, սիրելի՛ Սարաֆեան: Երեւակայէ, որ իր մարդը մեկնած է ուրիշ կնոջ⁴⁰ մը հետ եւ անոր հետ կը վերադառնայ, եւ ինք, լքուած կինը, մօր մը պէս հոգածու է Զարեանին հանդէպ ու ամէն կերպ կը ջանայ որ «բանի մը պէտք չունենայ եւ հանգիստ ընէ»: Ի դէպ, Զարեան ծանր գործողութեան մը ենթարկուած է եւ շատ դիւրաբեկ առողջութիւն մը ունի:

Դեռ ուրիշ շատ բան կ'ուզէի գրել քեզի, սիրելի Սարաֆեան, բայց ափսոս, որ Ժամանակս կարճ է: Ըսեմ այսքանը միայն, թէ այս ճամբորդութեանըս ընթացքին հանդիպած անձերուս մէջ ամէնէն քաղցր եւ անխառն յիշատակը քեզմէ է որ կը պահեմ: Կը ցաւիմ միայն, որ չափազանց կարճ եղաւ մեր հանդիպումը: Բոլոր գեղեցիկ բաներուն ճակատագիրը կարճ տեւելն է երեւի:

Յարգալիր բարեւներ՝ տիկնոջ⁴¹ եւ օրիորդին⁴²:

Ջերմ սիրով՝

Ա. Ծառուկեան

Յ. Գ.

Ներքիակ՝ 2000 ֆր.: Իսկոյն պատասխանէ, որպէսզի մինչեւ Նոր Տարի ուրիշ ալ դրկեմ: Ան.

Ը.

Հալէպ, 25 Դեկտ. 1947

Սիրելի՛ Սարաֆեան,

Փնտռած խաղաղ պահս կ'ուշանայ, խաղաղօրէն կարենալ գրելու համար քեզի: Ու կը տեսնեմ – տխրութեամբ – թէ օրացոյցին թերթիկները կը հատնին: Ու ես կ'ուզեմ, որ այս նամակս հասնի քեզի Նոր-Տարիին: Արդ, աւանդութիւն մը յարգած ըլլալու համար՝ «Շնորհաւոր Նոր-Տարի» – եւ – «Բարի Կաղանդ» կ'աւելցնէինք մեր տղայ օրերուն:

Կեանքս նորէն մտաւ իր «բնական» հունին մէջ: Այսինքն, անվերջ տագնապ, ջղագրգիռ վիճակ եւ սրտմաշուք: Կ'երթանք, կուգանք, կը վիճինք, կը

³⁸ Նուարդ Զարեան (1917–2005).- քանդակագործուի:

³⁹ Թագուի Շահնազարեան (1887–1962).- դաշնակահարուի, Զարեանի առաջին կինը:

⁴⁰ Ֆրենսիս Պրուքս-Զարեան (1900–63).- ամերիկացի նկարչուի, Զարեանի երկրորդ կինը:

⁴¹ Սարաֆեանի կինը՝ Բրաբիոն Սարաֆեան (շնորհակալութիւն՝ պատմաբան, բանասէր Վարդան Մատթէոսեանին՝ անունը յուշելուն համար):

⁴² Բանաստեղծին որդեգիրը՝ Անահիտ Սարաֆեան-Պաստրմաճեան:

մաշինք եւ... կը ձանձրանանք ի վերջոյ: Առջի օր քեզ... երազս տեսայ: Տարօրինակ է, բայց այսպէս է: Տարտամ էր, ինչպէս կ'ըլլան երազները, բայց որոշ մէկ բան կար, որ մեր տունն էիր ու մայրիկս իմ բացակայութեանս քեզ ընդունած էր իբրեւ... Հայաստանէն փախստական մը...⁴³

«Նայիրի»ի բացառիկը լոյս տեսաւ: Կը ստանաս սովորական փօստով: Երկրորդ օրինակ մըն ալ: Չմոռնամ՝ թէ վէպդ⁴⁴ ստացայ... Հռոմի մէջ: Դեռ չեմ աւարտած ընթերցումը, կը խոստովանիմ ամօթով: Ահաւասիկ կարգ մը էական խնդիրներ:

ա) Յառաջիկայ շաբաթ, Նոր-Տարիին, Պէյրութի մէջ հաւաքոյթ ունինք՝ Համագումարի շուրջ: Կը յուսամ, թէ գործնական եւ վերջնական որոշումներ կուտանք: Մինչ այդ, կազմած ենք հետեւեալ ծրագիրը. Սուրիա-Լիբանանէն խումբ մը գրողներ, որոշած ենք արտասահմանէն գալիք գրողներուն մէկական ուսումնասիրութիւն նուիրել եւ հրատարակել պրակներով՝ մինչեւ Համագումար: Քու մասիդ պիտի գրէ Եդ. Պոյաճեանը⁴⁵, Պէշիկթաշեանի մասին՝ Թէօլէօլեանը, Նարդունիի մասին՝ հաւանօրէն Արմէն Անոյշը⁴⁶, Համաստեղի մասին՝ Կարօ Սասունի⁴⁷, Զարեանի մասին՝ ես, եւն., եւն.: Պըրակները պիտի ըլլան իւրաքանչիւրը 32 էջ եւ ուսումնասիրուած հեղինակներուն լուսանկարովն ու կենսագրութեամբը⁴⁸: Ես ստանձնած եմ, իբրեւ գրողներու միութեան քարտուղար, հաւաքել նիւթերը: Արդ, կենսագրական տեղեկութիւններ, ինչպէս եւ անտիպ ու մասնաւոր առնուած լուսանկար մը, բարի եղիր փութացնել հասցէիս, որպէսզի հասցնեմ Պոյաճեանին:

բ) Իմ կողմէ բարի եղիր տեսնել Արամ Անտոնեանը⁴⁹ եւ խնդրէ իրմէ՝ որ

⁴³ Առաջին էջի ձախ լուսանցքին գրուած է՝ «Սպանալուդ պէս՝ երկրորդ մը: Մէջինին համար:

Կորուստին վախը չէ, այլ, օրին ձեռքդ անցած չըլլալու վախը», իսկ քիչ մը վար՝ «Անտոնեանին հետ ծրագրած էինք բացառիկ թիւ մը նուիրել Պ. Դուրեանին: Շարքաւ նիւթեր ունի: Խօսէ իրեն եւ ջանացէք միասին աղօտոր բան մը ընել»:

⁴⁴ Հաւանաբար կ'ականարկէ Սարաֆեանի Մանուկ Դուինեան վէպին (Էտիք Փրինթ, Երեւան, 2020, 136 էջ): Առաջին անգամ տպուած է Նայիրիի 1948 Փետրուար, Մարտ, Ապրիլ եւ Մայիս թիւերուն մէջ, յաջորդաբար էջ 17–35, 125–41, 213–36 եւ 281–94:

⁴⁵ Եղուարդ Պոյաճեան (1915–66).- սփիւռքահայ գրող, հրապարակագիր, խմբագիր, ուսուցիչ:

⁴⁶ Արմէն Անոյշ (1907–58).- բուն անունով՝ Արմէն Մարաշեան, սուրիահայ բանաստեղծ, արձակագիր:

⁴⁷ Կարօ Սասունի (1889–1977).- սփիւռքահայ արձակագիր, բանասէր, Պէյրութ լոյս տեսնող *Բագին* գրական ամսագիրի հիմնադիր-խմբագիր, ՀՅԴ կուսակցութեան անդամ:

⁴⁸ Կարելի չեղաւ պարզել, թէ յիշեալ ուսումնասիրութիւնները տպուած են կամ ոչ:

⁴⁹ Արամ Անտոնեան (1879–1951).- պատմաբան, ցեղասպանագէտ, հրապարակագիր:

դրկէ Դուրեանի⁵⁰ նուիրուելիք թիւին նիւթերը⁵¹։ Իրեն ալ կը գրեմ, բայց այս րոպէիս հասցէն ձեռքիս տակ չէ։ Կը ներես որ երկտող մը ներփակեմ քու նամակիդ մէջ։ Նոյն չքմեղանքը յայտնէ նաեւ քու կողմէդ եւ ըսէ թէ անհամբեր կը սպասեմ։ Անտոնեանը հին մարդ է, իրաւ հայ։ Հակառակ մեր կուսակցութեան դէմ ըլլալուն, միշտ յարգած եմ զինք։ Հետզհետէ երեւան եկող գաղութահայ նոր տիպարներուն ի տես՝ որոնք ոչ հայ են եւ ոչ ալ մա՛րդ՝ երանութեամբ եւ կարօտով պիտի փնտռենք մեր հին... հակառակորդները...

գ) Որոշած էի անակնկալօրէն Կաղանդի ֆթար⁵² մը դրկել տունիդ, բայց շաբաթ մը առաջ հոս ալ յանկարծ մէջտեղ ելլող քօլերայի պատուհասը արգելք է։ Նամակատունէն բացարձակապէս մերժեցին։ Ներփակ թղթադրամը՝ (5000 ֆր.), իբր այդ ընդունէ, եղբայրօրէն։ Ջերմագին բարեւներ՝ հարազատներուդ։

Սիրով եւ կարօտով՝
Ա. Ծառուկեան

Թ.⁵³

Նիկոսիա (Կիպրոս), 2 Մայիս 1948

Սիրելի՛ Սարաֆեան,

Կը ներես որ չկրցայ օրին պատասխանել նամակներուդ, երբ մանաւանդ ինքս մեծ փափաք ունէի գրելու քեզի։ Քանի մը անհրաժեշտ ճամբորդութիւններ կային ու ես կրկին թափառեցայ տեղէ տեղ։ Հիմա հոս եմ, Եգիպտոսի ճամբուն վրայ, 15 օրէ ի վեր։ Այսօր կը մեկնիմ Պէյրութ, հոնկէ կա՛մ Հալէպ կամ Գահիրէ անցնելու համար, ուր պիտի մնամ 5-6 օր։ Ամէնէն ուշը Մայիս 10-ին Հալէպ կ'ըլլամ՝ սկսելու համար «Նայիրի»ի Մայիսի թիւին տըպագրութեան։ Այս այլապէս խառնակ ճամբորդութիւններուն մանուածապատ բացատրութիւնը չէ որ կ'ուզեմ տալ անշուշտ քեզի։ Յայտնեմ միայն, թէ առնուազն երկու անգամ նամակ գրեցի քեզի առանց փօստին յանձնելու։ Չկարենաս հասկնալ գուցէ, թէ ինչ պատճառ կրնայ արգելք ըլլալ որ գրուած նամակ մը փօստին յանձնուի։ Եւ սակայն իրողութիւն է ըսածս։ Օշականի մահուան առիթով գրեցի քեզի, որովհետեւ, միակ անձը որուն պէտք էր գրել այդ առիթով, դուն էիր։ Իր կեանքի վերջին իրիկունը, մեր խօսակցութեան նիւթը դուն էիր։ «Վէնսէնի անտառ»ին մասին, երբ պզտիկ ծանուցում մը ըրած էի, գրած էր ինձի.- «Կուշտ եմ աժան հիացումներէդ։ Երբ մէկը սիրես՝ երկինք կը հանես. ատեն՝ դժոխք կը դրկես»։ Հալէպի մէջ՝ կարդաց եւ իրաւունք տուաւ ինձի։ Յաղթանակս օգտագործելով՝ ուզեցի

⁵⁰ Պետրոս Դուրեան (1851-72).- արեւմտահայ վաղամեռիկ բանաստեղծ։

⁵¹ Նայիրի, Նոյ.-Դեկ., 11-12:1951։

⁵² Իսլամադաւաններու ընթերցը՝ Ռամատանի միամսեայ ծոմապահութեան շրջանին (արաբերէն)։

⁵³ Նամակին առաջին հրատարակութեան համար տե՛ս՝ *Յառաջ - Միտք եւ արուեստ*, 4 Յունիս 2006, էջ 3։

նոր դիրքեր գրավել եւ տուի որ կարդայ «Մուսթաֆան»⁵⁴: Նստաւ ու կարդաց մեր աչքին առջեւ: Կէսէն անդին՝ չէր ուզեր կարդալ, այնդեղով թէ «կը բաւէ իրեն այդքանը՝ կարծիք յայտնելու համար»: Բողոքեցի եւ պարտադրեցի որ կարդայ մինչեւ վերջը: «Մարդ Աստուծոյ, գո՛նէ կարենանք օր մը վկայել թէ Օշական ծայրէ ծայր կարդաց գիրք մը»: Խնդաց ու շարունակեց: Յետոյ ըսաւ մեր Եդ. Պօյաճեանին: - «Ա՛ն, կարդա դուն ալ այս գիշեր. վաղը կը խօսիմ եւ դուն ալ կ'օգտուիս»: Եդուարդը տարաւ «Հայրենիք»ները⁵⁵: Առտուն կանուխ՝ եկաւ, որպէսզի «օգտուի»: Գիշերը մեռած էր Օշական: Զարհուրելի բան մը եղաւ ատիկա մեզի համար: Անշուշտ նոյն ցաւը պիտի կըրէինք եթէ ուրիշ տեղ մըն ալ մեռնէր: Բայց հոս, մեր աչքերուն առջեւ, այդպէս անսպասելի կերպով... Ոչ մէկ ատեն մահը այդքան բիրտ ու տգեղ չէ երեւցած աչքերուս: Դեռ մինչեւ այսօր աչքերուս առջեւն է: Դժուար թէ կարենամ ձերբազատուիլ այդ պատկերէն: Անցնինք: «Դուինեան»ը կը վերջանայ այս թիւով (Մայիս): Վէպը պարունակող թիւերը (4 հատ) ծրարով մը կը դրկեն Մայիսի թիւին հետ: Սրբագրութիւններդ կատարէ եւ վերադարձուր՝ բ. տպագրութեան համար: Ուրիշ կերպ կարելի չէ: Փորձ դրկել-ստանալը մեզի համար անկարելի է: Տողաշար չունինք եւ տառերս հազիւ 15-20 էջ կը շարեն:

Մայիս 10-15 ընկերներէս մէկը օդանաւով Փարիզ կուգայ: Իրեն հետ կը դրկեն խոստացած ծրարս եւ դրամ: Նոր բան մը եթէ ունիս՝ դրկէ: Զերմապէս կը խնդրեմ, սիրելի Սարաֆեան, որ այս նամակագրութիւններուս անկանոնութիւնը չցաւցնէ քեզ: Պահանջկոտ մի նկատեր զիս, եթէ խնդրեմ, որ գրես եւ միշտ գրես ինծի: Հաւատա՛, տեսաբար կը մտածեմ քու մասիդ եղբայրական հոգիով: Նամակ չգրելս անտարբերութիւն մի նկատեր: Առօրեային յորձանքը խաղաղ տրամադրութիւններու արգելք կ'ըլլայ ու ես միշտ մտածելով հանդերձ քու մասիդ, չեմ կրնար գրել առանց խաղաղութեան: Մե՛ծ բան մըն է յուսալ՝ որ կը հասկնաս ու կը ներես:

Բարեւներ հարազատներուդ:

Եղբայրօրէն՝ Ա. Ծառուկեան

Ժ.

Հալէպ, 31 Յուլիս 1948

Սիրելի՛ Սարաֆեան,

Առջի շաբաթ գրեցի քեզի, երկարօրէն: Մինչեւ հիմա ստացած կ'ըլլաս նամակս: Առանց պատասխանիդ սպասելու, կը գրեմ դարձեալ: Աշխատասիրութեան բարենիշ մը ստանալու համար չէ այս փութկոտութիւնս, այլ պարզապէս հաղորդելու համար Գրողներու Համագումարին առած դարձը-լածքը: Ներփակ կոչը կը բացատրէ արդէն հիմնականը: Պաղեստինի

⁵⁴ Ն. Սարաֆեան, «Մուսթաֆա», *Հայրենիք*, Մայիս-Յունիս, Յուլիս-Օգոստոս 1947, յաջորդաբար էջ 1-11 եւ 29-38:

⁵⁵ *Հայրենիք*. - ՀՅԴ Ամերիկայի պաշտօնաթերթ, լոյս կը տեսնէ 1899էն:

խնդրին ստեղծած կացութիւնը բաական լուրջ է այս երկիրներու հանդարտութեան համար, եւ այդ խնդրին յիշատակութիւնը մեր կոչին մէջ պարզ ձեւակերպութիւն մը չէ, եւ ոչ ալ խուսափում մը: Այս պայմաններուն մէջ չուզեցինք ծանր պատասխանատուութիւն ստանձնել Ամերիկայէն եւ Ֆրանսայէն մարդ բերելու: Մնաց որ, տարի մը վերջը ընելով, շատ ատելի հիմնական եւ կազմակերպուած ձեռնարկ մը կ'ըլլայ Համագումարը: Այս առիթով, յայտնեմ, թէ ա'լ ծանծրացայ Համագումարին շուրջ վեճ լսելէ եւ վեճ ընելէ: Կարդացի «Արեւմուտք»ի ձեր «լսարան»ին պատգամները: Ողջախոհներուք թով ինչ կարեւորութիւն կուտաք այլեւս այդ Խոնդկարեաններու⁵⁶ եւ Չիթունիներու⁵⁷ (ի դէպ, այս վերջինը Չիթ ունի, թէ՛ խիթ) իմաստութեանց: «Լաւ է, գէշ է, դէմ է, թեր է» – Օ՛, իրապէս ջղայնացնող է այլեւս կարգ մը մարդոց անսրբագրելի նեղմտութիւնը: Հայոյելու այնպէ՛ս փափագ մը կայ մէջս: Ի վերջոյ ո՛վ են այդ մարդիկը, ի՞նչ կապ ունին Հայ Գրականութեան հետ: Վաթսունը անցնելէ վերջ դեռ ներելի՞ է շփացած տղեկի քմայքոտ վերաբերում մը՝ հանդէպ ամէնէն լուրջ խնդիրներուն: Երանի ձեզի որ այդքան լայն սիրտ ունիք լսելու զիրենք եւ հակաճառելու իրենց:

Այս թղթատարով պիտի գրեմ նաեւ Միսաքեանին: Պատշաճ է, որ Ֆրանսայի գրողներու անունով Համագումարին անհրաժեշտութիւնը շեշտող գրութիւն մը դրկէք մեզի Շթորայի⁵⁸ հաւաքոյթին: Ասիկա Սովիեթներուն բեմադրած կեղծ համակրանքի ցոյցերուն պիտի չնմանի անշուշտ, այլ պարզապէս պիտի ըլլայ քաջալերանք մը, խթան մը գործի լծուած տղոց – Դուն, Միսաքեանը, Նարդունին, Պէշիկթաշլեանը, Թօփալեանը, Պարսամեանը⁵⁹ եւ նոյնիսկ Որբունին⁶⁰ եւ ուրիշներ՝ կրնաք պատշաճ ու պարկեշտ բանաձեւի մը տակ ստորագրել եւ հասցնել մեզի: Կարծեմ եթէ դուն գլխաւորես գաղափարը՝ ատելի պատշաճ է: Յամենայնդէպս, պահանջ մը չէ ասիկա, այլ յիշեցում մը:

Լոնտոն մեկնող բարեկամներս (Լետոն Պապլուզեան⁶¹ եւ Յովին. Շահին-

⁵⁶ Արշամ Խոնդկարեան (1881–1965).- քաղաքական գործիչ, Հայաստանի առաջին հանրապետութեան արդարադատութեան նախարար, հրապարակագիր, խմբագիր:

⁵⁷ Տիգրան Չիթունի (1881–1960).- գրող, բանահաւաք-բանասէր:

⁵⁸ Շթորա, Լիբանանի Պեքաա հովիտի գիւղաքաղաքներէն, Պէյրութէն 44 քմ. դէպի արեւելք:

⁵⁹ Մկրտիչ Պարսամեան (1886–1965).- ֆրանսահայ արձակագիր, ուսուցիչ, խմբագիր:

⁶⁰ Զարեհ Որբունի (1920–80).- բուն անունով՝ Զարեհ Էօքսիւզեան, ֆրանսահայ վիպագիր:

⁶¹ Լետոն Պապլուզեան.- արմատներով ղէյթունցի, երկար տարիներ վարած է ՀՄԸՄ Սուրիոյ մասնաճիւղի սկաւառական շարժումի խմբապետութիւնը: Յետագային հաստատուած է Միացեալ Նահանգներ, ուր մաս կազմած է *Արթըր Տը Լըթիլ* ճարտարագիտական ընկերութեան: Մասնակցութիւն բերած է ԱՄՆ «NASA» ազգային

եան⁶²) հոն հասած են արդէն: 8-10 օրէն կ'ըլլան Փարիզ: Հինա, բրինձ եւ սիկարէթ յանձնած եմ Լեւոնին, որ պիտի տայ քեզի: Հինան այստեղէն առի եւ տուի: Միասնեը ինք Պէյրութէն պիտի առնէր եւ վստահ եմ թէ առաւ:

Նայիբիին համար չմոռնաս ձեռագիր մը, ինչպէս գրած եմ: Օգստ.-Սեպտեմբ. թիւերը պիտի ըլլան միացեալ եւ մինչեւ Օգոստոս 20ը պէտք է ձեռագիրը ձեռքս ըլլայ: Յուլիսի թիւը լոյս տեսաւ արդէն: Այսօր փօստ կը տանին:

Անտոնեանին համար յանձնարարութիւն մը ըրած էի: Հաղորդեցի՞ր: Ի՞նչ պատասխանեց:

Սիրով եւ կարօտով՝
սպորագրութիւն

ԺԱ.

Հալէպ, 28 Նոյմբ. 1948

Սիրելի՛ Սարաֆեան,

Երկար ատենէ իվեր... չես գրած ինծի: Կարծեմ իրարու տարօրինակութիւնները փոխադարձաբար ճանչցանք քիչ մը, որպէսզի փոխնիփոխ յանցաւոր ըլլանք եւ փորձենք դիմացինը յանցաւոր հանել... Տպաւորութիւնս այն է, թէ դո՛ւն կրնաս նեղուած ըլլալ դարձեալ, երբ ես, իմ կարգիս, յանցաւոր ըլլալու զգացումը չունիմ: Այս յառաջաբանը՝ հրետանիի նախապատրաստական ումբակոծում մըն է անշուշտ թշնամի դիրքերուն վրայ, բուն յարձակողականէն առաջ, (ի դէպ, քանի որ պատերազմական ոճով կը խօսինք, յայտնեմ, թէ կը սպասեմ գարնան, նոր թոհչք մը փորձելու համար դէպի Փարիզ), որ ահաւասիկ.– Նայիբիին նոր թիւն ալ, Հոկտեմբեր, փօստին յանձնեցինք առջի օր: Հոն տպուած է վերջին ձեռագիրդ⁶³, Լ. Շ.ին⁶⁴ զանազան նկատումներ, որոնց գլխաւորը կանոնաւորութեան մտահոգութիւնը, մղեցին տալու հետեւեալ որոշումը.– Յունուարին պիտի փակեմ այս տարին: Նայիբին սկսած է Փետրուարին: Դեռ երեք թիւ ունիմ այս տարուան հաշտոյն, որոնց բոլորը միասին եւ միացեալ՝ Նոր Տարիին կ'ուզեմ հանել, որպէսզի յաջորդ տարուան Ա. թիւը լոյս տեսնէ Յունուարին եւ այսպէս յաջորդաբար: Արդ, մամուլին յանձնուելիք երեք թիւերը պիտի կազմեն զանգուածեղ հրատարակութիւն մը, որուն տպագրութեան կը սկսինք անմիջապէս: Պիտի խնդրեմ որ ա) ձեռագիր մը փութացնես այդ թիւին համար բ.) յայտարարութիւն մը յառաջիկայ տարուան աշխատակցութեանդ շուրջ

օդատիեզերական գործակալութեան անջրպետային հետազօտութիւններուն: Մահացած է 1979ին:

⁶² Յովհաննէս Շահինեան.– ծնած է Սեբաստիա 1901ին: Տարագրութեան օրերուն հասած է Սուրիա: 1932ին հաստատուած է Պէյրութ: Եղած է ՀՄԸՄ Լիբանանի շրջանային վարչութեան ատենապետ:

⁶³ Խօսքը «Գիրքերն ու մենք» գրութեան մասին է, *Նայիբի*, Հոկտեմբեր, 9:1948, էջ 691–96:

⁶⁴ Յստակ չէ, թէ ո՛վ է:

(վիպակ, պատմուածք եւն.) եւ գ.) Արամ Անտոնեանէն պատասխան մը, Դուրեանի նուիրութիւնը թիւին շուրջ: Այս մասին երեք անգամ գրեցի, քեզի եւ իրեն, առանց պատասխան մը ստանալու:

Շատ կը խնդրեմ, սիրելի Սարաֆեան, կարելի եղածին չափ փութով պատասխանէ այս խնդրանքներուն, որովհետեւ նոր թափով լծուած եմ Նայիրիին եւ ամէն կարգի այլ գործերու վրայ նախապատուութիւնը կու տամ այս մէկին:

Սիրով՝
Ա. Ծառուկեան

Յ. Գ.

Կը յուսամ թէ այս տարի Կաղանդ պապուկը ժամադրութիւնը կը յարգէ...
(ստորագրութիւն)

ԺԲ.

Հալէպ, 6 Մայիս 1949

Սիրելի՛ Սարաֆեան,

Կը մտածեմ, թէ մեր լռութիւններով նորէն կրնանք հասնիլ տեղ մը, որ սառուցեալ գօտին չէ ապահովաբար, բայց կրնայ անոր ներգործութիւնը կատարել մեր սրտերուն վրայ, սրտերուն մէջ: Ի՛նչ լաւ պիտի ըլլար, որ այնքան մը ապրած ըլլայինք միասին, որ պարբերական լռութիւնները չկարենային ո՛րեւէ անհաճոյ ենթադրութեան մղել մէկս միւսիս հանդէպ: Քու լռութիւնդ մանաւանդ, անկախ ընթացիկ նամակագրութեան օրէնքէն, անկախ հաւանական դառնութեան մը պարագայէն, մտածել կու տայ ինծի մոայլ հոգեվիճակի մը մասին, որուն մատնուելու տրամադիր կ'երեւիս յաճախ: Իմ կողմէ ամէն խրատ եւ թելադրանք աւելի պայծառ եւ լաւատես տրամադրութիւն մը յանձնարարելու քեզի, եթէ ծիծաղելի չգտնես, անշուշտ անիմաստ պիտի նկատես: Եւ սակայն, կ'ուզէի եղբայրական բառեր գտնել, ըսելու համար քեզի, թէ անխառն երջանկութիւն պիտի ըլլայ ինծի համար գիտնալ, թէ լաւ ես հոգեպէս ու ֆիզիքապէս եւ կ'աշխատիս: Այսքան: Մնացեալը՝ պարագայական արժէք ունեցող բաներ են: Օր մը ձեռագիր պահանջել, ուրիշ օր մը խնդրանք մը ընել, եւն., եւն.:

Կ'անդրադառնամ, թէ կայունութեան եւ անկումի շրջան է դարձեալ Արտասահմանի գրականութեան համար: Նոր արժէքներ չեն երեւիր, հին արժէքները կը խամրին կամ կը գօսանան: Դիտէ շուրջդ, դիտէ հեռուն: Ստեղծագործութիւնը օրէ օր տեղ կը զիջի շատախօսութեան, հոետորութեան: Ես ինքս այդ բաներուն մթնոլորտին մէջ եմ, բայց կը տառապիմ ուրիշներուն ալ վարակովիլը տեսնելով: Աղուոր, կշտացնո՛ղ գիրք մը տեսա՞՞մ ես տարիներէ իվեր: Խորունկ ապրումներէ եկող ու խորունկ ապրումի մը տանող էջ մը կարդացա՞՞մ ես ատենէ իվեր: Եթէ հանդիպած ես, իմացուր: Համատարած այս խեղճութիւնն է որ աւելի կը շեշտէ քու մութ տրամադրութիւններուդ մասին ունեցած վախս: Չարիք պիտի ըլլայ, եթէ դուն ալ տեղի տաս ու տար-

ուիս ընդհանուր թմրածությունէն: Օրը օրին ապրող ու գրող լրագրային գրագետներէն վեր՝ թող գտնուին գոնէ քանի մը հատ գրականութեան գրագետներ:

Փոխեմ նիւթը: Առջի օր 5ական քիօնոց երկու ծրար (սուրճ-շաքար-սիկառէթ) ճամբայ հանեցի հասցէիդ, բայց քանի մը շաքաթ ետքը կը հասնի ձեռքդ, որովհետեւ օղային ճամբով չէ: Ուրիշ կէտ մը: Սա Պարսամեանին երկու տարիէ իվեր 10ական օրինակ Նայիրի կը դրկենք: Ի՞նչ եղան հաշիւները: Քեզի լիազօրութիւն՝ պատրաստ գումարը գանձելու: Յայտնեմ, թէ ցարդ որեւէ վճարում չէ ըրած Պարսամեան: Բարի թող ըլլայ հաշուեկշիռ մը դրկելու կամ քեզի յանձնելու:

Ջերմ բարեւներ հարազատներուդ եւ հարցնող բարեկամներու:

Կարօտով՝

Ա. Ծառուկեան

Եթէ Նայիրիին յարմար բան մը ունիս՝ մի՛ ուշացներ:

ԺԳ.

Հալէպ, 12 Յուլիս⁶⁵

Սիրելի՛ Սարաֆեան,

Երկու նամակներդ ալ առի՛ իրարմէ քանի մը օր տարբերութեամբ: Մէկը միախն հերքումն էր: Իսկ ես՝ հաւասարապէս արժանի չեմ ե՛ւ առաջինին լեղիին, ե՛ւ երկրորդին շաքարին: Էականը այն է սիրելի՛ս, որ անփոյթ եւ թափթփած մէկն եմ: Ու կը սպասեմ – գուցէ անհետեթ է նման ակնկալութիւն մը – որ մարդիկ լռելեայն հասկնան կարգ մը բնական բաներ եւ անհրաժեշտ չըլլայ հասարակ տեղիք խօսքերով հաւաստիքներ տալ կամ առնել: Ըսի՛ – վստահաբար չեմ յիշեր ըսած կամ գրած ըլլալս, բայց կարելորդ այդ չէ – եւ կը կրկնեմ, թէ Փարիզի մեր մտաւորականութեան մէջ ամէնէն աւելի քեզ սիրած եմ տեսնելէ առաջ, ու միակն ես, որուն մասին միեւնոյն բանը կը զգամ ու կը մտածեմ նաեւ զինք անձամբ տեսնելէ ետք: Անձերու հանդէպ ունեցած կարծիքս ոչ մէկ ատեն ենթակայական եղած չէ, ու անոնց կողմէ լաւ կամ գէշ ընթացք մը երբեք չի կրնար աղարտել հիմնական տպաւորութիւնը, որ կու գայ առաջին շփումէն, գործին կամ անձին հետ: Մէ՛կ անգամով մէկը կը սիրենք կամ չենք սիրեր: Մնացեալը, ժամանակին ու պայմաններուն բերած խաւն է – ոսկեփողին կամ մուրը – որ չի կրնար ձեւագեղծել էութիւնը: Պատահած է, որ ամբողջ տարիներ սիրով ու գուրգուրանքով մը տածեմ բարեկամի մը մասին, տեսաբար ունենամ զինք մտքիս մէջ բայց նաեւ երկտող մը չգրեմ իրեն: Մտածածէս եւ զգացածէս տարբեր երեւելու սինիք կամ ախտաւոր հաճոյք մը չէ ասիկա, այլ, պարզ անփութութիւն մը գուցէ, կամ, աւելի ճիշդը, մարդկային կարողութիւններու հանդէպ բարձրագոյն ըմբռնում մը, սպասելով, որ դիմացինդ հասկնայ քեզ, առանց որ

⁶⁵ Տարեթիւը 1949 ըլլալու է:

ստիպուիս ըսել ինչ որ կրնայ հասկցուիլ առանց ըսուելու: Անցնինք: Յայտնեմ միայն – եւ հաւանօրէն այս մէկը աւելի յստակ բացատրէ միտքս քան վերելի ամբողջ մանուածապատ նախադասութիւնները պիտի կրնային – թէ պիտի չուզէի այս նամակը գրել, եթէ առաջին նամակիդ չհետեւէր երկրորդը: Ոչ թէ քէն ընելով կամ դառնանալով, այլ պարզապէս ցաւելով քու հաշտոյդ, թէ ինչու զգացական աշխարհիդ այնքան ուժեղ կազմաւորում մը ունեցած պիտի չըլլայ ու բնազդդ այնքան սո՛ւր՝ որպէսզի պէտք ունենաս ընթացիկ ապացոյցներու՝ հաստատելու համար ներսէդ, քեզի համար ամէնէն թանկագին եւ անսխալական դատաւորէ մը – խիղճէ մը թերեւս – եկող առաջին վճիռը: Չերկարեմ, սիրելի Սարաֆեան: Ու քանի որ առիթը դուն տըփիր, յայտնեմ թէ նիւթը, դրամ կամ իր, երբեք զիս չէ կրցած իրեն կապել նոյնիսկ կարի դերձանով մը: Դրամ կ'ունենամ եւ կը ծախսեմ: Միա՛յն կը ծախսեմ: Եթէ յիմար կոչուելու վախը չունենամ, պիտի ըսեմ թէ կը նետեմ: Գիրքեր կ'ունենամ եւ կը բաժնեմ: Մի գարմանար, եթէ ըսեմ թէ... գրադարան իսկ չունիմ: Նոյնիսկ անմիջական պէտքերու համար, հանրային գրադարանն է աղբիւս: Ու մտածել, որ տեսաբար գիրքի դրամ տուող եւ կարդացող մըն եմ: Միայն Նայիրիին եկած գիրքերը եւ հեղինակներու նուէրները պիտի բաւին գրադարան մը կազմելու: Իսկ իմ գրադարանս՝ սեղանիս վերայի գիրքերն են՝ սպասելով, որ ընկերներ գան, եւ – «Կարդամ՝ վերադարձնեմ»... Այս վիճակս գնահատելի չէ աչքիս: Արժանիք մը չէ այլ թերութիւն մը, գիտեմ: Բայց... այսպէս է: Ու այս բոլորէն թաքուն արժանիք մը ակնկալողի մտավախութեամբ պիտի ամչնայի որեւէ ատեն որեւէ մէկուն նըման բան մը գրելէ, եթէ դուն մօտաւորապէս կոսհած չըլլայիր բարեկամէ մը առած տեղեկութիւններէդ եւ արդէն իսկ գրած չըլլայիր: Բայց պզտիկ հակասութիւն մը կայ վերջին երկտողիդ մէջ: Եթէ հաւատացիր ըսուածներուն եւ հաւատացիր քու իսկ գրածիդ, այլեւս աւելորդ կը դառնան չքմեղանքի նմանող այն խօսքերը, որոնցմով արդարացնել կ'ուզես կատարած գանձումդ բարեկամէս: Ոչ միայն լաւ ըրած ես, այլեւ շնորհակալ եմ որ գոհունակութիւն մը պատճառած ես ինծի: Մանաւանդ որ իրաւունքդ ալ է: Ուզած հինադ ալ կը ստանաս, եւ ոչ շատ ուշ: Ուրիշ բարեկամ մը այս ամսու վերջը Լոնտոն կ'երթայ Փարիզի ճամբով: Իրեն հետ կը դրկեմ: Բայց եթէ իր օդանաւը արկած մը ունենայ, եւ խեղճ տղան օրին չկրնայ հասնիլ, չելլես նորէն կասկածիս եւ... «բարեկամդ դեռ չերեւցաւ...» եւն., եւն.:

X

Դուինեանը կամ քեզմէ որեւէ գիրք տպելու պատրաստակամութիւնս կը մնայ միշտ: Բայց թեքնիք դժուարութիւններ կան, սրբագրութեան համար: Եթէ փորձերը քեզի դրկեմ, շարուածքը պիտի անշարժանայ: Իսկ տառերս բաւարար չեն: Դուինեանը – զոր ես շատ սիրած եմ – արժէքատու գործ մը ըլլալով հանդերձ, գրավաճառային գրաւութիւն չունի: Առայժմ Նայիրիի մէջ կրնայ մնալ: Աւելի շարժուն գործ մը կրնայ արդիւնաւորուիլ նաեւ նիւթապէս՝ հատորի վերածուելով: Եթէ կարենաս ձեռագիրդ մեքենագրուած վի-

ճակով հասցնել ինձի, երկու-երեք հոգի միասին կատարելով տպագրական գործերը, կարծեմ կրնանք բաւարարել քեզ:

Նայիրիին համար 8-10 էջնոց քանի մը պատմուածք եթէ պատրաստես, մեծապէս գոհ կը մնամ: «Շատրուանները» կը տպուի Յուլիսի թիւով⁶⁶: Շարուած է արդէն: Կը սպասեմ ուժեղ արծակի մը: Օգստ.-Սեպտեմբեր միացեալ եւ խոշոր թիւ մը պիտի ընեն: Կ'ուզեմ, որ այդ թիւին հասցնես – մինչեւ Յուլիսի վերջը – աղուոր բան մը: Անտոնեանին գրածս ի՞նչ եղաւ: Բարեւներ քովիններուդ: Սիրով՝ Ա. Ծառուկեան⁶⁷

ԺԴ.

Beyrouth, 1 Դեկտեմբ. 1958

Սիրելի՛ Սարաֆեան,

Երկար ու յոգնեցուցիչ ճամբորդութենէ մը ետք, հասայ վերջապէս տուն, Եգիպտոսի վրայով, ուր մնացի նաեւ շաբաթ մը: Քանի մը օրէ իվեր միայն այստեղ եմ ու հազիւ թէ հանգչած եմ... յոգնութիւնս զգալու չափ: Ոչ գրելու տրամադրութիւն կայ, եւ ոչ ալ շարժելու ֆիզիքական ուժ, բայց առաջին մը-տաճումս կ'ըլլայ գրել քեզի: Անպայման ըսելիք մը ունենալուս համար չէ որ կը գրեմ: Ամէն ինչ ըսած եմ եւ, ես ու դուն, դժուար թէ հիմնական ըսելիք մը ունենանք իրարու, որ արդէն ըսած չըլլանք, կամ առանց ըսելու չհասկնանք: Բայց որովհետեւ փափաքեցար, որ անպայման գրեմ, ահա կը կատարեմ խոստումս, պարզապէս տուրք վճարելով անսրբագրելի դիւրագագցութեանը: Ուրեմն, գրելիքս ուրիշ բան չի կրնար ըլլալ – այս զլուխով – եթէ ոչ յիշեցնել թէ.

1.– Նայիրիի յառաջիկայ թիւերէն մէկը⁶⁸ ամբողջովին պիտի նուիրուած ըլլայ քեզի եւ գրականութեանդ: Այդ թիւին համար անհրաժեշտ է.

ա) Նոր եւ անտիպ լուսանկար մը:

բ) Քեզմէ կարճ եւ անտիպ արծակ մը, պարագային յարմար, նամակի կամ այլ ձեւի մը տակ:

գ) Արծակ եւ չափածոյ երկու կտորներու մատնանշում՝ տպուած գործերէդ, քու նախասիրութեամբդ, լաւ կ'ըլլայ որ ճշդուած կտորները դրկես, թէեւ գիրքերդ ունիմ: Կրնայ վերջին պահուն ձեռքի տակ չգալ եւ անախորժութիւն ստեղծել ու խանգարել:

դ) Քու մասիդ գրուած լուրջ յօդուածներէն քանի մը ընտիր հատուածներ:

Այս բոլորէն դուրս, որեւէ նիւթ կամ վաւերաթուղթ՝ որուն տպուիլը յարմար տեսնես ծրագրուած թիւին մէջ, կրնաս դրկել: Աւելորդ է ըսելը, թէ բոլոր

⁶⁶ Սարաֆեանէն նման խորագրով գրութիւն մը չկայ այս թիւին մէջ: Անոր փոխարէն կը գտնենք քերթուած մը՝ «Հոն...» (Նայիրի, 7:1949, էջ 417–22):

⁶⁷ Վերջին էջի ծախ լուսանցքին շեղակի գրուած է՝ «Շուր գրէ ինձի եւ իսկոյն կը պատասխանեմ: Քանի որ խառնուածքդ բացառիկ է, կասկածամտութեանդ ճիգ կ'ընեն առիթ չտալու»:

⁶⁸ Նայիրի, 1 Փետրուար, 41:1959:

նիւթերը ապահովագրած կը դրկես եւ եթէ ուզես վերստանալ, կը ճամբեմ միեւնոյն եղանակով:

2.– Ինչ որ խօսեցանք Հայաստան այցելութեան մասին, կը հաստատեմ կրկին: Կը կարծեմ թէ ամէնէն ուշը գարնան կարելի է իրագործել եւ հրատարակելիք թիւ ալ արդէն որոշ նպաստ մըն է այդ ուղղութեամբ:

Ջերմագին բարեւներս տիկ. Սարաֆեանին եւ օր. Պաստրմաճեանին: Կը յուսամ թէ տիկնոջ անհանգստութիւնը անցաւ մինչեւ հիմա:

Կրկին բարեւներով եւ եղբայրօրէն՝

Ա. Ծառուկեան

Յ.Գ. Ձեռագիրս կը մատնէ արդէն ֆիզիքական եւ հոգեկան վիճակս: Դեռ ահագին տաղտուկներ կան՝ եկող-գացող գոհացնելու: Այս շաբաթ սակայն կը սկսինք Նայիրիի վերահրատարակութեան:

- Գրութիւնդ, գոնէ Ա. էջը, մասնաւոր թուղթի վրայ եւ սեւ մելանով գրէ որպէսզի կարելի ըլլայ քիչէն հանել որպէս նմոյշ ձեռագրի: Կենսագրական մըն ալ գրէ, երրորդ դէմքով, ինծի համար:

ANTRANIG DZARUGIAN'S LETTERS TO NIGOGHOS SARAFIAN (1947-1958)
(SUMMARY)

ARTHUR SHENIAN
arthurshenian@gmail.com

The collection presents fourteen letters from prominent Diaspora Armenian writer Antranig Dzarugian (1913-89) to French-Armenian poet Nigoghos Sarafian (1903-72), written between 1947 and 1958.

The letters provide valuable insights into the literary landscape of the time, reflecting Dzarugian's editorial approach and his unique perspectives on a range of literary phenomena. They also highlight his strong personal bond with Sarafian, marked by Dzarugian's generous support for Sarafian's work.

The correspondence serves as a crucial resource for understanding the dynamics of Armenian literary circles in the mid-20th century Diaspora.